№ 59 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՄԱՐՏԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՄԱՐՏԻ № 59

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ թէ 0 կոպ. նամականիշ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կունենան 10 ր. բաժանորդավճարը կը ստանան որպէս պրեմիա հետեւեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ցանցվածը»—մեծ վէպ Շահրիարի այկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱԶԴ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ մասնակցութեամբ յայտնի
դերասանուհի տիկ. ՍԻՐԱՆՈՅՇԻ
ԱՊՐԻԼԻՑ ԿԸ ՍԿՍԻ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ։

Պատրաստվում են ներկայացման համար «ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ» Լէօի վէպից փոխադր. Ս. Ադամեանի, «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ» Ազարեանի, «ԵՒԳԻՆԷ» Շիրվանզադէի, «ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ» Շանթի, «ԱՐՑՈՒՆՔԻ ԾՈՎ» Շահ-Պարոնի, «ՀԱՄԼԵՏ», «ՄԵԴԵԱ» և «ՕՐԼԵԱՆԻ ԿՈՅՍ»։

Ներկայացումներին մասնակցելու են՝ (այբուբենական կարգով) տ. տ. Աշխէն, Զաբէլ, Յասմիկ, Ղարախանեան, Մայսուրեան, ՍԻՐԱՆՈՅՇ, Սեւումեան, պ. պ. Իս. Ալիխանեան, Ազեան, Գրիգ-Ֆալեան, Դաւիթ-Խան, Յարութինեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մուրադեան, Մելքոնեան, Սեւումեան և ուրիշներ։

Առաջին անգամ կը ներկայացվի «ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ» Լէօի անմիջական հսկողութեամբ Ս. Ադամեանի փոխադրած միակ օրինակով, մասնակցութեամբ յայտնի դերասանուհի տիկ. ՍԻՐԱՆՈՅՇԻ և ղեկավարութեամբ պ. ԼԷՕԻ։

Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ. Ռեժ. օգնական՝ ՓԻՐՈՒՄԵԱՆ

(22,26,27,29) տ. 169. 5—1 Յուշարար՝ Չարչարեան



ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Բագուի Հայ Դերասանական Ընկերակցութիւն
Պօղոս Յովհաննիսեան ԱՄԻՐԱԳՕԻ տնօրինութեան ներքոյ
Թատերաշրջան սենսացիոն նորութիւնների
Յատուկ բեմադրութեամբ
Երկուշաբթի, մարտի 23-ին և Չորեքշաբթի, մարտի 25-ին
ԲԱՑՈՒՄՆ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԻ
Առաջին անգամ Թիֆլիսում
ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
Ղարաբաղի մելիքների կեանքից։ Դրամա 5 գործ. փոխադրութիւն օր. Ս. Եզօյեանի (ըստ Լէօի համանուն վէպի)

Ա. գործ. Համբարձման տօնը Ղարաբաղում։ «ՋԱՆ ԳԻՒԼԻՒՄԻ» վիճակահանութեան արարողութիւն, որ կը կատարեն Ղարաբաղի աղջիկները երգեցողութեամբ։
Բ. գործ. Մելիքի կին Աննա Խաթունը և Մելիքի աղջիկ հերոսուհի Գայիանէն։
Գ. գործ. Թուրք փաշաների ժողովը Սուլէյման-բէկի մօտ։ Հայերի կոտորման ծրագիրը։
Դ. գործ. Գայիանէի հերոսական վճիռը և Մելիք Աւանի ծրագիրը ղաչաղ Մանասի հետ։
Ե. գործ. Բարեկենդան։ Աննա Խաթունի ապարանքում։ Դաւադրութիւն։ Հայ կանանց յարձակումը և Թուրքերի ջարդը։

ՍԱԶԱՆԴԱՐ, ԶՈՒՌՆԱ, ԴՈՒԴՈՒԿ, ԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐ, ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։ ◆ Գլխաւոր ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Հետեւեալ ներկայացումը մարտի 26-ին՝ «ԱԼԶԱՍ»—ֆրանս-պրուսական պատերազմից վերցված յայտնի դրամա։ (ա.օ.) տ. 165. 3—2

ԹԱԹԱԽՈՒՄ

Ուսուցչ. Միութեան ուսումն. մեր արիւնակից ՓԱԽՍՏԱԿԱՆ-ԳԱՂԹԱԿԱՆ 131 աշակերտները իրանց ծնողներով հրաւիրվում են ԶԱՏԿԱԿԱՆ ԹԱԹԱԽՄԱՆ, որ կազմակերպւում է Գրական-Գեղարվեստական Սալօնը։

Նրանք, որոնք իրանց համար հոգեկան հաճոյք և քրիստոնէական սէր կը համարեն վայելել այս Թաթախման՝ սեղանակից լինել մեր արիւնակից փախստական հիւրերին, այսու հրաւիրվում են մինչև աւագ ուրբաթ ստանալու աթոռի №-ը։ Մուտքն՝ մի հոգուն 3 րուբլի։

Թաթախման ճաշկերոյթը կը սկսվի՝ Վանքի մայր տաճարում պատարագը վերջանալուց կէս ժամ յետոյ։ Հանդէսը հասակաւորների համար կը տևէ մինչև առաւօտեան ժամը 2½-ը։ Կոնցերտային ընդարձակ բաժին։ Եւրոպական ասիական երաժշտութիւն ու պարեր։ Ճառեր ու արտասանութիւն։

Հիւրերին կը սպասարկեն արտիստուհիները և Սալօնի մշտական այցելուհիները՝ գեղագէտների, լրագրողների ընտանիքները։

Նուիրական սեղանը կօրհնէ Բենիկ վարդապետ։

տ. 13. 3—3 Տնօրէն՝ Տիգրան Նազարեան

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնելով, որ ԱՌԱՋԻԿԱՅ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ շնորհակալութեամբ ընդունում է ԱՂՔԱՏՆԵՐԻ և ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ համար նուէրներ դրամով, մթերքներով և շորով, ամեն օր ժամը 10-ից մինչև 2-ը, Ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская пл. № 7), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ անձնաւորութիւններին օգնութեան հասնել այդ թշուառներին։ տ. 161. 3—3

„ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՈՄԻՏԷՆ" յայտնում է, որ լոյս տեսաւ
«ՄԱՆՈՒԿ» ընկերութեան հրատարակութեամբ
ՀԱՅՈՑ ԳԵՏԵՐ
ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂ
Հայոց 69 գետերի խաղաթղթերով՝ պատկերազարդ գրքոյկ, հայոց գետերի քարտէզով։
Գինն է 1 ր. 50 կ.
Ցանկացողները թող դիմեն՝ «Հայ Օրիորդների Կոմիտէին»—Թիֆլիս, Гановская № 18, առաւօտեան 12—1½ ժ., երեկոյեան 5—6 ժ.։
տ. (կ.) 170. 2—1

ԿԱՐԴԱՑԷ՛Ք
„ՄԱԽԼԱՍ"
Գրական-երգիծաբանական պատկերազարդ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ, որ լոյս կը տեսնի կիրակի, մարտի 22-ին։

Այն բաժանորդները, որոնք բաժանորդագրվել են 1914 թ. միայն կէս տարով, նրանց ընդհատվում է շաբաթաթերթի առաքումը։ Խմբագրութիւնս խնդրում է այն բաժանորդներին, որոնք մի տարով, կամ 1914 թ. յուլիսից բաժանորդագրվել են, շտապեն մի բաց նամակով յայտնել իրանց հասցէները, որպէս զի խմբագրութիւնս դիւրութիւն ունենայ բոլորին բաւարարել։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала «МАХЛАСЪ», Петхаинская ул. № 20.
տ. 168. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք դրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ռ. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Գ. Շահպարոնեանց
(ձ կ.) տ. 970. 100—38

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 10—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նորքափողոցից։
տ. (Տ.Կ.) 804. 100—94

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասսիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով, առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլօլակ՝ Ռտիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(չ. տ. կ.) տ. 875. 70—70

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նազարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. / եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) տ. 784. 100—79

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԻԿ ՕՐԻՆԱԿ

Զուր չէ ասված, որ մեծամեծ աղէտները, տառապանքները միացնում, շաղկապում են մարդկանց։ Եւ ոչ միայն միատեսակ, միարիւն, միացեղ և միալեզու, այլ և բազմատեսակ, բազմացեղ, բազմալեզու մարդկանց, տարբեր դաւանանքների, հայեացքների, ուղղութիւնների և հոսանքների մարդկանց։

Եւ դրա պերճախօս ապացոյցը՝ այն նկարագրութիւնն է, որ «Մշակի» աշխատակից Սարուխանը տուեց «Մշակի» երէկվայ համարում Պետրօգրադ մայրաքաղաքի ցոյց տուած վերաբերմունքին դէպի այն օրերը, որոնք կոչվել են «հայկական» և ուր ընդհանուր ժողովարարութիւն է կատարվել յօգուտ թշուառ հայ փախստականների։

Պետրօգրադը, գլուխ ունենալով իր պատուական քաղաքագլուխ կոմս Տօլստոյին և ի դէմս իր լաւագոյն ներկայացուցիչների՝ գիտնական, քաղաքական, հասարակական, հրապարակախօսական, պարլամենտական գործիչների՝ հանդէս եկաւ ամբողջ 3 օր հրաւէր կարդալով մայրաքաղաքի ազգաբնակութեան՝ օգնել մի ժողովրդի, որի էմբլէման, խորհրդանիշը ներկայացնում էր խաչը, որ, ներկայ դէպքում, ներկայացնում է չարչարված հայութիւնը։

Եւ այդ մեծ խորհրդանշի, այդ չարչարված հայութեան շուրջը բոլորեցին ոչ միայն ռուս մեծ ազգի լաւագոյն զաւակները, այլև ռուսական մեծ պետութեան միւս ազգութիւնների ներկայացուցիչները՝ լեհացիներ, հրէաներ, վրացիներ, մի խօսքով ռուսական քաղաքացիներ։

Շատ ճիշդ է նկատում մեր աշխատակից Սարուխանը, որ Պետրօգրադի համակրական այդ արտայայտութեան ոչ թէ նիւթական կողմն է կարևոր և գլխաւոր, այլ նրա բարոյական կողմը, որովհետև դրանով ռուսական մեծ պետութեան մայրաքաղաքը, սկսած բարձր խաւերից մինչև հասարակ դասակարգը, առանց ազգութեան, կրօնի խտրութեան, իր անկեղծ համակրութիւնն է արտայայտում հայկական դատին, գնահատում այն ջանքերը, զոհերը, որ չարչարված, տանջված հայութիւնը արել է և անում է ռուս և միւս ազգերի հետ միասին ընդհանուր հայրենիք Ռուսաստանի յաղթանակի համար։

Եւ մենք աներկբայ ենք, որ իբրև մամուլի օրգան, հրապարակով մեր անկեղծ երախտագիտութիւնը և ուրախութիւնը յայտնելով Պետրօգրադի հայկական օրերը կազմակերպողներին, ի դէմս ազնիւ քաղաքագլուխ կոմս Տօլստոյի և նրա բոլոր աջակից կազմակերպողների, մեծ արձագանգ տուած կը լինենք համայն հայութեան երախտագիտական զգացումներին։

Եւ, անշուշտ, ապագայ հայ պատմութիւնն էլ նոյնպիսի երախտագիտութեամբ կարձանագրէ իր էջերում այդ փաստը, լուսաւոր «հայկական օրերը»։

Հ. Առաքելեան

ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Թէ առհասարակ հայ հեղինակները հարստահարվում և շահագործվում են—դա փաստ է։

Մի նոր դէպք նորից հրապարակի վրա է դրել այդ խնդիրը։

Հայ գրող Լէօի մի վէպից («Մելիքի աղջիկը») մի հայ օրիորդ, Եզօյեան, փոխադրութեամբ մի պիէս է կազմել, որը խաղացվել է Բագւում, Արմէնեան դերասանի կազմած խմբի կողմից, և նիւթական կողմից մեծ աջողութիւն է ունեցել։ Այդ խումբը, աջակցութեամբ Ամիրագօյի, որոշել է այդ պիէսը, ի միջի այլոց, ներկայացնել և Թիֆլիսում։ Սակայն վէպի հեղինակ Լէօն վերջերս յայտարարեց, որ նա չէ թոյլատրում այլ ևս խաղալ այդ պիէսը, պատճառաբանելով նրանով, որ փոխադրութիւնը կոպիտ ձևով է կատարված, որ ինքը չէ տուել իր համաձայնութիւնը և իրան շահագործում են։

Թւում էր, թէ երբ մի հեղինակ յայտարարում է, որ այլ ևս թոյլ չէ տալիս իր վէպից փոխադրած պիէսի ներկայացումը, պէտք էր դադարեցնել ներկայացումը։ Սակայն այդպէս չը վարվեցին Ամիրագօն և Արմէնեանը։ Նրանք յայտարարեցին, որ իրանք ունեն օրինական իրաւունք, որ որոշ և մեծ ծախքեր են արել, որ ստացել են հեղինակի թոյլտուութիւնը, ուստի և յետաձգել չեն կարող։

Եւ ահա մենք ականատես ենք այսպիսի մի տեսարանի. մի կողմից հեղինակը բողոքում-աղաղակում է, թէ ինքը շահագործվում է, թէ իրան կողոպտում են, թէ իր վէպը ենթարկված է կոպիտ փոփոխութեան, իսկ միւս կողմից դերասանական խումբը աղաղակում է, թէ ինքն ամենայն իրաւունք և հիմք ունի խաղալու այդ պիէսը և պատրաստ է այդ իրաւունքը ապացուցել պետական և միջնորդ դատարանի առաջ։

Ի հարկէ, եթէ խնդիրը դրվի իրաւաբանական հողի վրա, այդպիսի մի հարց վճռելու ձեռնհասութիւնը պատկանում է դատարանին։ Սակայն կայ խնդրի բարոյական, էթիքական կողմը, որը և մեզ ստիպում է մի քանի խօսք ասել։

Մենք գտնում ենք, որ երբ մի հեղինակ ինքը գտնում է, որ իր գրուածքը աղաւաղված է, այլ ևս խօսք լինել չէ կարող նրա ներկայացման մասին։

Գալով ներկայ դէպքին, մենք պէտք է ասենք, որ ճանաչելով հանդերձ Լէօի, իբրև հեղինակի, իրաւունքը, մենք չենք կարող արդարացնել նրան ներկայ դէպքում բարոյական և էթիքական տեսակէտից։ Արմէնեանը մեզ ցոյց տուեց Լէօի մի նամակը, որից պարզ երևում է, որ նա, Լէօն, թոյլատրել է պիէսի փոխադրութիւնը և ներկայացումը։ Ուրեմն Լէօն առաջ թոյլ է տուել, հաւատացել է օր. Եզօյեանի և Արմէնեանի ճաշակին, լռել է, երբ մի քանի անգամ ներկայացրել են, բայց սկսել է բողոքել միայն այն ժամանակ, երբ տեսել է, որ փոխադրողը և խաղացողները մեծ արդիւնք են ստանում, իսկ իրան քիչ են տալիս։ Ստացվում է, կարծես, այն տպաւորութիւնը, որ եթէ Արմէնեան և Եզօյեան տային Լէօին այն, ինչ որ նա էր ցանկանում և պահանջում, նա աղաղակ չէր բարձրացնի և աղմուկը, գանգատները, թէ հայ հեղինակը հարստահարվում, շահագործվում է, տեղի չէին ունենայ։

Ահա այդ է դատապարտելին հեղինակի, գրողի կողմից, ինչպէս և առաւել դատապարտելի է փոխադրողի և դերասանների վարմունքը։ Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—о—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—о—

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐ

(Սեփ. թղթակցից)

Ալէքսանդրօպօլ, 17 մարտի

Վանի վիլայէթում ճարակում է բծաւոր տիֆը։ Այդ ի նկատի ունենալով, Խօթուրը գրաւած մեր զօրքերը շարժվում են դէպի Թիւրքիա։ Քիւրդերը և թիւրք չէտաները կոտորած են կատարել Ուրմիայի շրջանի Գիւլաֆշան, Ջահարգիւշան գիւղերում։ 2000-ից աւելի ասորի գիւղացիներ, 300-ից աւելի կին և աղջիկներ գերի են տարված։

Աստղեա

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

16 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մարտի 15-ին ծովամերձ շրջանում կատարվում էր հրացանաձգութիւն։

Մեր զօրքերը, արշաւելով Բօրչխայի և Արդանուշի մօտից, գրաւեցին Արդուինը՝ ցիրուցան անելով թիւրքերին դէպի հարաւ։

Սարըկամըշի ուղղութեամբ՝ ձախ զօրաթևի վրա կռիւ է տեղի ունենում։

Մնացած ուղղութեամբ աննշան հրացանաձգութիւններ են։

17 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մարտի 16-ին ծովեզերքի ուղղութեամբ աննշան հրացանաձգութիւններ էին։

Արդուինի շրջանում թիւրքերը վանվեցին դէպի Մէլօ։

Սարըկամըշի ուղղութեան ձախ զօրաճակատում մեր զօրքերը գրաւեցին Դէլիբաբա, Կարադէրբէնտ և Էչակ-Էլիաս շրջանները, ետ մղելով թիւրքերին դէպի արևմուտք։ Կովկասեան հին գնդերից մէկը խիզախ գրոհով օրհներգի հնչիւնների տակ վանեց թիւրքերին իրանց գրաւած դիրքերից։

Մնացած ուղղութեամբ աննշան հրացանաձգութիւններ են։

ԴԱՐԴԱՆԷԼԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 մարտի

ՍՕՖԻԱ.— Կ. Պօլսից հաղորդում են, որ Դարդանէլում և շրջակայքում կենտրոնացած թիւրքական ուժերը կազմում են 5-րդ զօրաբանակ, որի հրամանատարութիւնը յանձնված է մարշալ Լիման Ֆօն-Սանդերսին, որ սկզբում 1-ին զօրաբանակի հրամանատարն էր։

ՍՕԼՈՒՆ.— Տենէդոս կղզուց հաղորդում են. «Դաշնակիցները գրաւեցին հեռագիրը և սահմանեցին պատերազմական ցենզուրա։

«Մարտի 14-ին գիշերով դաշնակից նաւատորմը մտաւ Դարդանէլ և ռմբակոծեց Կիլիդ-բահր բերդը։

«Մարտի 15-ին Սարօսի ծոցից մինչև ցերեկվայ ժամը 4-ը լսվում էր ուժեղ թնդանօթաձգութիւն։

«Նեղուցի առաջ կանգնած զրահանաւը սաստիկ ռմբակոծութեան ենթարկեց Կրիդի (?) խօտի դիրքը։ Նաւատորմին օգնում էին օդագնացները»։

ԲՕՍՖՕՐԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Մարտի 16-ի առաւօտեան մեր նաւատորմը մօտեցաւ Բօսֆօրի արտաքին ամրութիւններին. բայց մառախուղի պատճառով, որից ափերը չէին երևում, չը կարողացաւ շարունակել բերդերի ռմբակոծութիւնը։ Մեր փոքր ռազմանաւերից մէկը ռմբակոծութեան բռնվեց թիւրքաց մի ականանաւի հետ, որ առաջին ռումբերից յետոյ սրարշաւ ճողոպրեց Բօսֆօր։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր ռազմաբեմի նոր շարժումները

Երկու օր առաջ պաշտօնական հեռագիրը հաղորդեց թիւրքերի կողմից Արդուինը այրելու և ապա թողնելու լուրը, իսկ ամսիս 15-ին մեր զօրքերը երկու կողմից՝ Բաթումից և Արդահանից միաժամանակ մտան թիւրքերից թողված Արդուին, շպրտելով թշնամուն դէպի հարաւ կամ, որ աւելի ճիշդ կը լինի ասել, դէպի թիւրքական սահմանը։

Եւ այսպէս խեղճ Արդուինը, Անդրճորոխեան շրջանի գլխաւոր քաղաքը, որ նոյեմբերից գրաւված էր թիւրքական ուժերի կողմից, չորս ամիս ու կէս թշնամու ձեռքում մնալուց յետոյ, վերջապէս, ազատվեց նրանցից և նորից ընդունեց իր օրինական տէրերին։

Ընդհանրապէս նկատելու է, որ ներկայ ռուս-թիւրքական պատերազմի ամբողջ ընթացքում ոչ մի շրջան մեր տերիտօրիայից այնչափ չը վնասվեց թիւրքերից, որքան գեղատեսիլ Արդուինը իր շրջակայքով։ Թիւրքերի մօտ 5-ամսեայ տիրապետութիւնը մեր այդ անհանգիստ անկիւնում բացառիկ տեղ է բռնում ռուս-թիւրքական կռիւների պատմութեան մէջ ընդհանրապէս։ Թիւրքերի այդ աջողութիւնը պէտք է բացատրել երկու հանգամանքով. առաջին՝ Արդուինի շուրջ գտնված մուսուլման ազգաբնակութեան դէպի թիւրքերն ունեցած համակրութեամբ, որի ապացոյցները ակներև են, և ապա այդ շրջանի բնական տեղագրութեամբ, որը շատ նպաստաւոր է փոքրիկ ուժերով մեծ աջողութիւններ ձեռք բերելու համար։ Եւ թիւրքերը լայն կերպով օգտվեցին այդ երկու նպաստաւոր պարագաներից, սակայն մինչև վերջը պահել իրանց ձեռքում այդ երկրամասը՝ այնու ամենայնիւ չը կարողացան և, նեղն ընկած մեր զօրքերի առաջխաղացութիւնից, քայլ առ քայլ ետ տուին այդ շրջանի գրեթէ բոլոր կէտերը։

Անշուշտ, չի անցնի կարճ ժամանակ, և մեզ կաջողվի մեր սահմանների ամբողջ գծից ետ շպրտել թշնամուն՝ չը թողնելով նրա ձեռքում և ոչ մի թիզ հող։ Բայց դա բաւական չէ. կովկասեան բանակը դաւաճանած կը լինէր իր պատմական տրադիցիաներին, եթէ նա թիւրքերի հետ կռւելիս բաւականանար միմիայն իր հողը թշնամուց ազատելու գործով. ընդհակառակը, նա միշտ էլ սովորել է թիւրքերի հետ պատերազմելիս խորը մտնել նրա տիրապետութեան սահմաններից և հաշտութիւն կնքելիս ունենալ իր իրական իշխանութեան տակ մի քանի նահանգներ։

Անկասկած, նոյնը աւելի մեծ չափերով կատարվելու է և այս պատերազմում, և եթէ այսօր Երզրումը իր նահանգով դեռ ևս գտնըվում թիւրքերի ձեռքում, դա չի նշանակում, որ մի երկու ամսից ռուսական յաղթական դրօշը չէ ծածանելու Երզրումի վրա։

Եւ դրա նշանները մենք ունենք արդէն։ Երէկվայ պաշտօնական հեռագիրը յայտնեց, որ Սարըկամըշի ուղղութեամբ՝ նրա ձախ կողմում սկսված է պատերազմ թիւրքերի դէմ։

Այս առայժմ համառօտ հաղորդագրութիւնը ցոյց է տալիս, որ թիւրքերը քշված լինելով Չէյդկանից և Դիադինից ներկայումս բռնել են Դէլի-Բաբայի կողմերը՝ նպատակ ունենալով այստեղից հսկել մեր շարժումների վրա Քեօփրիւ-Քեօյ—Հասան-Կալէ—Երզրում ուղղութեամբ, լաւ գիտենալով, որ գարունը բացվելուն պէս մեր ուժերի առաջխաղացումը, ինչպէս առաջներում, այժմ ևս այս ուղղութեամբ է լինելու։

Եւ այսպէս՝ սպասելու է մեր ռազմաբեմի ճակատում նորանոր շարժումներ, հենց որ Ալա-Դաղի, Գեադուկի և Փալան-Թօքեանի լեռնադաշտերը կազատվեն ձիւնի գոնէ մի մասից, թէկուզ ու-հնար լինի, քանի դեռ լեռնային գետերը չեն վարարել, ապահովաբար անցնել անճանապարհ այդ երկրով։

Իսկ դա տեղի կունենայ ապրիլի վերջերից ոչ առաջ. մինչև այդ, անկասկած, Պօլսի բաղդը ևս վճռված կը լինի դաշնակից պետութիւնների միահամուռ ջանքերի շնորհիւ։

Ա. Երէժ

ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՎՈՀՄԱԿՆԵՐԸ

(Մեր թղթակցից)

Ջուլֆա, 4 մարտի

Օր օրի վրա սոսկալի լուրեր են հասնում Ատրպատականի խորքերից։ Ամեն եկող սարսափներ է պատմում, ամեն գնացող յուզումների և մռայլ մտքերի մէջ է տառապում։ Գնում են ուրիշներին, հարազատներին փախցնելու, բերելու և ազատելու, բայց երբ գնում և աչքերով տեսնում են սարսափները, աւերածները, կոտորածներն ու յափշտակածները, ընկճված սրտով, վշտաբեկ և հոգեկան տանջանքների դատապարտված ետ են գալիս։

Ուրմիայի արևմտեան կողմը, Բարանդուզ-չայի ակունքներին գտնվում է Ջումալան ասորական գիւղը։ Դեկտեմբերի 20-ին փախստականների կարաւանին միացան և Կովկաս անցան ջումալանցիները՝ համարեա 1200 հոգի։ Դրանցից 60 հոգի պառաւներ և աղքատներ մնացել էին, հնար չէին ունեցել փախչելու։ Այդ թշուառներն էլ ենթարկվել են գիւլաֆշանցիների և չահարքուշանցիների ասպատակներին։ Ամբողջ երկու ամիս ամեն տանջանքի, ծեծի, կողոպտման, առևանգութեան մատնվելուց յետոյ, փետրվարի վերջերքին խմբառ կոտորվել են քիւրդական հրոսակների և օսմանեան չէտաների ձեռքով։

Ջումալանից 5—6 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Քեաֆսի գիւղը, ուր նոյնպէս ասորիներ են ապրում։ Այս գիւղի 1000 հոգու չափ ժողովուրդը նոյնպէս փախստականների հետ անցաւ Արաքսը, մտաւ Երևանի նահանգը։ Բայց 75 հոգի աղքատներ և ծերեր մնացել էին։ Այս թշուառներին էլ երկու ամիս տանջելուց, կողոպտելուց և ծառայեցնելուց յետոյ՝ մինչև վերջին անհատը կոտորել են։ Չեն խնայել ոչ ոքի, նոյնիսկ կանանց և աղջիկներին։ Այս գիւղի մէջ օսմանեան չէտաները կոտորել են երեխաների, լցրել են թոնիրները, խորովել և չանգալներով դուրս քաշելով ստիպել են ծնողներին ճաշակել իրանց խորոված զաւակների միսը։

Այս երկու գիւղի բոլոր ամբարները, մառանները և քիլարները դատարկել և տարել էին աւազակները։ Ինչ որ հնար չէին գտել տանելու, ջարդել, փշրել, ապականել և փտտել էին։

Այս գիւղերի մօտն է նոյնպէս Գեարդաբաղ հայաբնակ գիւղը, որ 200 տուն ազգաբնակութիւն ունի, մօտ 1200 հոգի։ Գեարդաբաղի ժողովուրդն էլ փախած էր Կովկաս և ապաւինված. միայն 107 հոգի մնացել էին կապված իրանց ծննդավայրին։ Քիւրդ հրոսակները՝ Մադօւր Գարնի-աղայի ձիաւորները այստեղ էլ այնպէս վարվեցին, ինչպէս վերոյիշեալ գիւղերում. և ապա փետրվարի վերջերքին կոտորեցին մինչև վերջին անհատը, տարան նոյնիսկ հինգ տասնեակ աղջիկներ։

Գեարդաբաղի հայերի տներից ամբարած ցորենը, կծանը, լծկանը, էշը, ջորին ու ձին տանելուց յետոյ, նախ կողոպտեցին փախչողների բնակարանները, ապա մնացողները։ Նոյնիսկ բանտարկեցին ժողովրդին եկեղեցում 2—3 օրով, որ կարողանան նրանց մօտ մնացած վերջին դրամը, ոսկի կամ արծաթի զարդը, անդուսի ու թաւիշի շորերը տանել։

Այս սպանութիւնների ընթացքում ամեն մի գիւղում ինչպէս սրանք, նոյնպէս շէս մօլլաները ստիպել են քրիստոնեայ ասորիներին և հայերին իսլամ ընդունել, ազատվել մահից, բայց ճշմարիտ ժողովուրդը նահատակութիւնն է սուել իր խիղճը հանգիստ մեռնելուն, քան թէ ցմահ խղճահարութեան տանջանքը քաշելու։

Հայդար

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նէմանի արևմտեան կողմի զօրաճակատում կռիւները շարունակվում են։

Մարտի 15-ին Լօձ քաղաքից 12 վերստ հեռաւորութեան վրա, Սարումագլ գիւղի մօտ, գերմանական գումարտակի մնացորդը, որին մենք ենթարկեցինք սուինային յարձակման, 250 մարդով զէնքը վայր դրեց։

Նարևվի աջ ափում, Շկվայի և Օմուլևվի միջև, շարունակվում են ռազմական ընդհարումներ առանձին ծառատանների ու բլուրների համար։ Մենք թշնամուն ետ մղեցինք Վիախ գիւղի շրջանից։

Կարպատներում Բարտֆելդ և Ուժոկ ուղղութիւնների միջև մեր գործողութիւնները զարգանում են միանգամայն նպաստաւոր։ Չը նայած թըշնամու յամառ դիմադրութեան և մի շարք կատաղի հակայարձակումներին, մենք տիրացանք նորից մի քանի ամուր դիրքերի, գերելով մի օրվայ ընթացքում 76 օֆիցէր և 5,384 զինուոր, ձեռք ձգելով 5 թնդանօթ, 21 գնդացիր և մի մինօմէտ։

Թշնամու մի զօրամաս, որ յարձակման էր դիմել Չերնօվցօվի մօտից, մարտի 15-ին ճեղքեց մեր զօրագիծը և շարժվեց դէպի Խօտինա։ Նրա դէմ միջոցներ ձեռք առնված են։

Վերջին օրերը գերմանական աէրօպլանները աշխոյժ գործունէութիւն են ցոյց տալիս։ Օստրօլէնի ուղղութեամբ մարտի 16-ին օդում միաժամանակ գտնվում էին թշնամու 15 աէրօպլան, որոնցից մի օրում նետեցին մօտ 100 ռումբ, բայց ոչ մինը այն տան վրա չընկաւ, որի մէջ, գերմանացիների ենթադրութեամբ, իբր թէ գտնվում էր ռուսական գերագոյն սպայակոյտը։

Օսովէցի ռմբակոծութիւնը համարեա դադարել է։ Մարտի 16-ին թշնամին բերդի վրա ծանր թնդանօթներից մօտ 100 ռումբ արձակեց։

ԼԻԲԱՎԱՅԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Մարտի 15-ի երեկոյեան գերմանական ռազմանաւերը, մօտենալով Լիբավային, արձակեցին քաղաքի վրա մօտ 200 ռումբ։ Սպանվեցին 3, վիրաւորվեցին 7 հոգի. սաստիկ վնասվեց «Բալտիկա» շոգենաւը. վնասվեցին մօտ 15 տուն. շատ հեռագրաթելեր կտրտվեցին, շատ տների պատուհանները ջարդվեցին։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 մարտի

ՓԱՐԻԶ.—Իպրի շրջանում մենք պայթեցրինք ական գերմանական մի դիտավայրի տակ։ Էպարժի մօտ թշնամին փորձեց խըլել մարտի 14-ին կորցրած խրամատները, բայց կատաղի կռւից յետոյ մենք պահեցինք մեր ձեռքում մեր տարածութեան մեծ մասը։ Թշնամին ձեռք ձգեց միայն նախկին խրամատներից մի քանիսը, սակայն մենք առաջացանք այլ տեղերում։

Թշնամին ռմբակոծեց Նիւպօրի քաղաքը և ծովային կուրօրտ Նիւպօրը, պատճառելով աննշան վնասուածքներ։ Շամպանում տեղի էր ունենում թնդանօթային կռիւ Բօսէժուրի մօտ։ Արգօնեան բարձրաւանդակի վրա տեղի էր ունենում հրացանաձգութիւն և ռմբաձգութիւն գլխաւորապէս Բագատէլ շրջանում, ուր կռիւները պահում են բաւական յամառ բնոյթ։

Արգօնեան անտառում ֆրանսիացիների և գերմանացիների խրամատներն այն աստիճան մօտ են միմեանց, որ հակառակորդները կռւում են բացառապէս ձեռքի ռումբերով։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 մարտի

ԼՕՆԴՕՆ — Ծովակալութիւնը հաղորդում է. Հօլլանդական «Ամստէլ» շոգենաւը, Ռօտտերդամից Գօօլէ գնալու ժամանակ, կպել է ականի Ֆլէմբօրօ շրջանում։ Նաւաստիներին հասցրել են Խէմբէր։

«Ագուլա» շոգենաւը, Լիվէրպուլից Լիսաբօն վերադառնալու ժամանակ, պայթել է Պէմբրօգի մօտ և ջրասուզվել է։ Խեղդվել են 2 նաւաստի։ Նաւապետը և 19 նաւաստի հասել են Ֆիշգարդ։

«Ֆալաբա» շոգենաւը պայթել է ականից և ջրասուզվել Միլֆօրդի մօտ։ 260 մարդուց ազատվել են 137։

ԼՕՆԴՕՆ.—«Ֆալաբա» շոգենաւը Միլֆօրդի մօտ ջրասուզվել է գերմանական սուզանաւի նետած ականից։ Շոգենաւից իջեցրած 5 ազատարար նաւակները ջրասուզվեցին, նաւապետը խեղդվեց։ Կենդանի մնացածները պատմում են, որ սուզանաւը ամբողջ ժամանակ գտնվում էր խեղդվողների շուրջ, անգամ չը փորձելով օգնել, իսկ նրա նաւաստիները ծիծաղով էին դիտում ուժասպառ մարդկանց։

«Ագուլայի» ջրասուզման ժամանակ խեղդվել են 5 հոգի, իսկ 4 նաւաստի վիրաւորվել են։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 մարտի

ԼՕՆԴՕՆ.—Ռէյտերի գործակալութիւնը իրազեկ եղաւ դիւանագիտական աղբիւրից, որ վերջերս Գերմանիան փորձեց դիւանագիտական ուժեղ ճնշում գործ դնելով ստանալ Ռումինիայի համաձայնութիւնը, որպէսզի Թիւրքիա անցնէ գերմանական մի զօրաբանակ։ Սակայն Ռումինիան չէ համաձայնել։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գերմանական գլխաւոր բանակից հաղորդում են, որ արևմտեան պատերազմաբեմում գեներալ Կլուկը իր զօրքի առաջաւոր խրամատները դիտելու ժամանակ թեթև վիրաւորվել է ռումբի կտորից։

ՑԵՏԻՆԻԷ.—Թագաւորը Պերեմիշլի անկման առիթով պաշտօնական ճաշ տուեց ի պատիւ դաշնակիցների և արտասանեց համակրական ճառ։

Ռուսական միսսիայի կառավարիչը յա նեց չերնոգորական կարմիր խաչին 95,0 ֆրանկ, որ ժողովել է ռուս-չերնոգորական ընկերութիւնը յօգուտ կարիքաւոր չեր գոր ընտանիքների։

ԼՎՕՎ.—Այսօր ամբողջ օրը ձիւն է գա

ՑԵՏԻՆԻԷ.—Մարտի 15-ին առնաւուտնե յարձակվեցին Դիակովիցայի մօտ մեր ս մանի վրա, բայց վանվեցին մեծ կորուս ներով։

ՏՕԿԻՕ.—Իօկօհամայի ճապօնական առ տրական ընկերութիւնը բաց է անում ա լեզուի դասընթացներ և կազմակերպում դասախօսութիւններ ռուս-ճապօնական յ րաբերութիւնների մասին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բարձրագոյն ըէսկրիպտ զինուորական խորհրդի անդամ, գործող զ րաբանակի հրամանատար գեներալ-ադի տանտ Ն. Վ. Ռուզսկին տկարութեան պա ճառով արձակվում է իր պաշտօնից և ն շանակվում է Պետական Խորհրդի անդամ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կովկասի փոխարքայ իշխ. Լվօվ հեռագրով շնորհակալութիւն է յայտնու որ համառուսական զեմստվօյի համակրան զգացմունքներ արտայայտեց իրան և կո կասեան զօրքին։

◆ Համազնուականութեան կազմակե պութիւնը մարտի 16-ին զատկական ընծա ներ է ուղարկել կովկասեան զօրքի համա

◆ «Р. В.»-ին հեռագրում են Բուխարէս տից, որ աւստրօ-ունգարացիք պատրաստ վում են նոր արշաւանքի Սերբիայի դէ Օրշօվի մօտ կենտրոնացել են բազմաթի զօրքեր թնդանօթներով։

◆ «Вѣч. Вр.»-ին հեռագրում են Գալա ցից, որ Բօլղարիայում տեղեկութիւններ ստացվել, թէ Սօֆիայում պարահանդի ժամանակ տեղի ունեցած մահափորձը կազ մակերպող հանդիսանում է մակեդոնաց Վէկիլօիէվը։ Ցայտնի է, որ նա գտնվու էր Գեննադիեվի առանձին հովանաւորու թեան ներքոյ։ Նրա տան մէջ գտնվել են 2 ռումբեր նոյն սիստեմի, ինչպիսին պայթե պարահանդիսում։

◆ Ա. Գուչկովը հոկտ. 17-ի միութեա կենտրոնական կօմիտէտի նիստում յայտնե է, որ մայիսին պատերազմը առանձնա վճռական կերպարանք, որովհետև մինչև այ պատրաստ է լինելու անգլիական 3 միլիօ զինուորից բաղկացած զօրաբանակը։ Ռուսա ների զէնքը յաղթող դուրս կը գայ։ Դա նակիցները համաձայնութեամբ Դարդանէլ և Ցարգրադն անցնելու են Ռուսաստանի

◆ Պարզվում է, որ ֆօն-դէր-Գօլց փաշա Կ. Պօլսից մեկնել է Վիլհէլմ կայսրի հրաւէ րով։ Պերեմիշլի անկումը ստիպեց կայզերի գերմանական զօրաբանակներից մէկի հրա մանատարութիւնը յանձնել ֆօն-դէր-Գօլց փաշային։

◆ «У. Р.»-ն հաղորդում է, որ ամերի կեան սիօնիստների նախաձեռնութեամբ ամերիկեան հրէաների մէջ հանգանակված է 1.300,000 ֆրանկ յօգուտ Պաղեստինի փախստականների։

◆ Մոսկվայի մահմէդականները հանդի սաւոր մաղթանք են կատարել Պերեմիշլի անկման առիթով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 մարտի

ՀՌՕՄ.—Սենատի նստաշրջանը ընդհատվեց Զատկի պատճառով։

Սենատոր Լէվին սենատորների խմբակի անունից հետևեալ յայտարարութիւնը արաւ. «Ես հաւատացած եմ, որ հանդիսանում եմ բոլոր ներկայ և բացակայ սենատորների մտքերի արտայայտիչ, ցանկանալով, որպէսզի երկիրը նորից միջոց տայ մեզ ժողովվելու տօներից յետոյ և որպէսզի բոլոր մեր յոյսերը լիովին իրականանան։ Գիտակցելով կառավարութեան վրա ընկած ծանր պատասխանատուութիւնը, մենք բոլորս պէտք է միանանք նրա շուրջը, որպէսզի նա կարողանայ այսուհետև ևս տանել տէրութիւնը դէպի փայլուն նպատակ»։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Գրիպպօն կառավարութեան անունից միացաւ այդ յայտարարութեանը։

Խօսելով ռուսական մամուլի յօդուածների մասին, վերաբերեալ Դալմացիային, «Ջիօրնալէ-դ'Իտալիա»ն գրում է.

«Իտալիան իմպերիալիստական ձգտումներ չունի, այլ կամենում է միայն վերադարձնել սկզբում ունեցածը և ամրացնել իր ռազմագիտական դրութիւնն ու զինուորական ույժը, ինչպէս Վենետիկում և Տրիէնտում, այնպէս և Ադրիատիկում, կամենում է ապրել և հնարաւորութիւն տալ ուրիշներին ապրելու։ Իտալիայի հիմնական քաղաքական ծրագիրը, թելադրված դէպքերից, հետևեալն է. Իտալիան երբէք ուրիշ ժողովուրդների ստանձնարման զէնք չի դառնայ, և եթէ անհրաժեշտութեան ոյժով համաձայնեցնենք մեր արդար ցանկութիւնները երկրի զինուորական ինքնապաշտպանութեան պահանջների հետ, ոչ-իտալացիների փոքր թիւ կընկնէ մեր սահմաններում, իսկ այդ չը պէտք է առիթ տայ ենթադրելու, թէ երբ Իտալիան ձգտում է հպատակեցնել իրան օտար ժողովուրդներին»։

ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 մարտի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Եասում, բազմամարդ միտինգում, որ կազմակերպել էր բոլոր ռումինների միութեան լիգան, նախկին մինիստր Ֆիլիպէսկուն հայրենասիրական ճառով, ի միջի այլոց, յայտնեց. «Մի քանի շրջաններում այժմ հարց է յարուցանվում Բեսարաբիայի մասին, բայց մինչև այժմ նրանք լռութիւն էին պահպանում և խօսեցին այն ժամանակ, երբ սկսվեց շարժում յօգուտ Տրանսիլվանիայի վերադարձման։ Մենք պէտք է գրաւենք Տրանսիլվանիան, որովհետև այնտեղ ռումինիզմի կենտրոնն է ու սիրտը և Կարպատների բարձունքների վրա ապաստան գտաւ ազգային գիտակցութիւնը։ Մեզ համար գոյութիւն ունի միայն մի խօսք՝ Տրանսիլվանիա և միայն Տրանսիլվանիա»։

Տրանսիլվանիայի բանաստեղծ Օկտավիան Գօգան ոգևորված ճառով ասաց, որ տրանսիլվանեան գիւղացիների բոլոր հայեացքները վստահութեամբ ուղղված են դէպի ռումինական արքան, որ ճակատագրով կոչված է իրագործելու ազգային իդէալը։

Պատմութեան պրօֆէսօր Իօրգան ասաց, որ Մոլդավիան պէտք է շնորհակալ լինի Տրանսիլվանիայից, որ ստեղծեց նրան, ուստի և նա պէտք է նպաստէ աւելացնելու ազգային հողը Տրանսիլվանիայի և Հարաւային Բուկովինայի հետ միացնելով։ Մենք յոյս ունենք, որ ռումինական արքան, յենվելով մոլդավ ժողովրդի վաղեմի քաջութեան վրա, կիրականացնէ մեր ազգային իդէալը, որ ուրախութիւն կը տայ մեզ՝ երկրիս երեսին և հանգստութիւն գերեզմանի մէջ։

Ժողովը որոշեց ուղարկել հեռագիրներ մինիստր-նախագահին, ցանկութիւն արտայայտելով թէ ազգային ակնկալութիւնները կիրագործվեն նրանց աջակցութեամբ ի փառս ու բարգաւաճութիւն ազգի և թագի։

Հայրենասիրական մանաժողովների պրոպագանդան դառնում է աւելի ակտիվ ու եռանդուն։

Ռումին ժուրնալիստների միութեան կոմիտէն ուղարկել է հետևեալ հաղորդագրութիւնը. «Կոմիտէն ժամանակին պարտականութիւն համարեց յայտնելու, որ այսպէս կոչված «ռուս գաղտնութիւնները Բուկովինայում» լրագրական քննութեան մէջ չի մասնակցի և ոչ մի ժուրնալիստ, որ անդամ է յիշեալ միութեան»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ստացանք 1) Քրիստոստուրեանից զատկական տօների առիթով՝ մատաղի փոխարէն՝ յօգուտ չքաւորների 10 ռուբլի. 2) Գրիգոր Ֆարրաշեանից—6 ռուբլի։

ՑՈՒՑԱԿ

Աճանասովսկի-պօստիկ եւ Խերսօվկա գիւղերի նուիրատուների

(Յօգուտ հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 39)

Գ. Սնափլեան 10 ր., Պ. Վարդիկեան 1 ր. 50 կ., տիկ. Դ. Յարութիւնեան և Խ. Քեօսեան 1-ական ր., Գ. Սթամբոլճի, Յ. Դեմիրչեան, Գ. Վարդիկեան, տիկ. Շ. Քեօսեան, Ա. Խանճեան, Մ. Խանճեան և Ա. Կալայչեան 50-ական կ., Յ. Ստամբոլճեան և Յ. Սահակով 25-ական կ., Յ. Գրիգորով, Յ. Խանճեան և Է. Քեօսեան 20-ական կ.։ Ընդամենը 18 ր. 10 կ.։

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ

Տեղական առեւտրականների անսահման ագահութիւնը առաջիկայ տօների պատճառով հասել է անկարգութեան ծայրայեղ չափերի. գնել որևէ բան սակագնով, մանաւանդ անհրաժեշտ մթերքներ՝ հաց և միս, հնարաւորութիւն չը կայ, ասում են։ Այդ մասին ինձ յայտնում են գրեթէ ամենքը ինձ հանդիպողները և խնդրում են իմ պաշտպանութիւնը։ Նրանք իրանց բողոքներով չեն դիմում առեւտրականների վրա կարգված ոստիկանական պաշտօնեաներին հէնց այն ժամանակ, երբ սակագնից բարձր գնով ապրանք են առնում, և այդ այն պատճառով, որովհետև վերջինները վախենում են բոյկոտի ենթարկել իրանց, որով միշտ, երբ թէ, սպառնում են բողոքողներին։ Առաջարկում եմ պրիստաւներին, ի լրումն իմ արած կարգադրութիւնների, ձեռք առնել իրանցից կախված միջոցները և սանձել առեւտրականների քմահաճոյքը։ Վերջինների վրա օրինական ներգործութիւն անելը թողնում եմ պրիստաւներին և հաւատացած եմ, որ գնորդների շահերը նրանք կը պաշտպանեն կատարեալ չափով։ Իմ կողմից առաջարկում եմ ուժեղացնել ոստիկանական հսկողութիւնը առեւտրավայրերում այնպէս, որ յանցաւորների վրա, գոյութիւն ունեցող կանոնները խախտելու համար, արձանագրութիւն կազմվի հէնց տեղում, առանց որ մեղաւորներին ոստիկանատուն առաջնորդելու։

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ

Ազգերն ու ժողովուրդներն այրվում են այն անօրինակ հրդեհի մէջ, որ համաշխարհային պատերազմ է կոչվում. այրվում են ֆիզիքապէս, տնտեսապէս, բարոյապէս։ Եթէ այդ մեծ չարիքի հետ կապված գալիք բարւօք օրերի յոյսն ու ակնկալութիւնը չունենային հրկիզվողները, ոչ մի սիրտ չէր դիմանայ, որ չը խորտակվէր։

Պատերազմի հրդեհից դառնապէս խանձված հայ ազգն էլ իր մարմինը, իր հոգին, իր հայրենիքը լիզող բոցերի մէջ, իր խորունկ վշտի յատակում թեթևութիւն, սփոփանք, փրկութիւն գտնելու յոյսերն ունի։

Այս յոյսերով թև առած ամեն մի հայ, դասակարգ, խմբակցութիւն իր ըմբռնողութեան համեմատ շտապեց անձնականի զոհաբերութեամբ ու միասով նպաստաւոր լինել, որ Մեծն Ռուսաստանը յաղթանակ տանի թշնամիների վրա, որ անպարտ հայ ժողովրդի արիւնը մինչև վերջին կաթիլը չը թափվի թիւրքերի ձեռքով, որ հայ բնաւեր ցրտատար ժողովուրդը իսպառ չոչնչանայ արիւնի, կրակի ծովերում։

Յոյսի և անյուսութեան, մահվան ու կեանքի սահմանագծում տենդօրէն մաքառող հայ ժողովուրդը մի դարաւոր հնաւուրց ազգային եկեղեցի ունի, որ իր գոյութեան սկզբից իր սրբազան կոչումով ոգեւորված՝ մերթ աւելի, մերթ նուազ չափով ծառայել է իր ժողովրդին։

Եկեղեցու և եկեղեցականի կոչումը շատ պարզ ու ցայտուն կերպով գրված է Աւետարանի մէջ՝ Նա կոչված է աղքատներին աչքալոյս տալու, խորտակված սրտերը վերականգնելու, կոյրերի աչքերը բանալու, սգաւորներին մխիթարելու, գերիներին ազատութիւն քարոզելու։

Ի պատիւ հայոց եկեղեցու՝ պատմութիւնը վկայում է, թէ, սակաւաթիւ բացառութեամբ, նա իր կոչումը լաւ է կատարել. կարճամիտ գործիչների կուրութիւնը բժշկել է, աղքատներին յագեցումով է ուրախացրել, յուսահատներին յոյս է տուել, սգաւորներին մխիթարել է, գերի ազգի ականջին ու սրտին ազատութեան հրաւէրն է հնչեցրել։

Այս պարտքը հայոց պատմական եկեղեցին կատարել է ինքնաբերաբար, ինքնագեկավարութեամբ, այլ ոչ արտաքին ցուցմունքներով և յիշեցումներով։

Յիշեցումներն ու ցուցումները եկեղեցու թմրութեան ու անկենդանութեան նշաններն են։

Ամիսներ առաջ մեր վիպասան Շիրվանզադէն «Մշակի» էջերից յիշեցրեց, թէ ներկայ ընդհանուր աղէտի ժամանակ գործողների մէջ չի երեւում հայ եկեղեցականը. նա չը կայ ոչ նիւթական օժանդակութիւն տւողների, ոչ կռւողների մէջ. նա կանգնած չէ ո՛չ վիրաւորի սնարքում և ոչ նրա հարազատների սգաւորների տանը, ոչ գերիների մէջն է, ո՛չ ազատութեան համար կռւողների բանակում։ Ո՞ւր է նա, ինչ է նրա կոչումը, ինչ է անելու նա։

Նոյն «Մշակում» Շիրվանզադէն ստացաւ իր պատասխանը մի արեղայից, թէ «չէ եւս հասեալ է ժամ» մեր գործունէութեան։ Բայց շուտով ահեղ պատերազմի տարին կը լրանայ, և այդ «ժամը» դեռ չի հասել։

Պատմութիւնից մենք գիտենք, թէ հայոց եպիսկոպոսներից, նոյն իսկ հայրապետներից ոմանք հայրենիքի ազատութեան անունով մղվող պատերազմների ժամանակ բանակն են գնացել և իրանց հեղինակաւոր կենդանի խօսքով օգնել են զօրքը. բացի բանակում եղած վարդապետներից, ամեն մի գունդ իր յատուկ քահանաներն է ունեցել միշտ իրանից անբաժան և ամեն մի ճակատամարտից առաջ զօրքը իր քարոզիչ հոգևորների քաջալերականներն է լսել, ամբարձրել է իր հաւատը, կուել է հերոսաբար և մեռել է հոգու հանգստութեամբ։

Այսպէս է և այժմ քրիստոնեայ ազգերի բանակներում։

Սակայն այժմ այդպէս չէ մեզանում. ռուսական բանակներում, պատերազմական երկու ճակատների վրա մենք ունենք մօտ 80,000 հայ զինւոր և 2000 օֆիցեր։ Եւ այսքան բազմութիւն, կարօտ հոգևոր մխիթարութեան, կարօտ իր հովիւների քաջալերութեան ու մխիթարութեան, սրտի կըսկիծով է նայում այլադաւան զինակիցների հոգևորականութեան վրա, որոնք իրանց զինաւոր որդոց առաջը կանգնած՝ սիրոյ ու նշանը ձեռքին՝ ստոր բնութիւնից ազատվելու կոչն ու քարոզն են կարդում, օգնում են նրանց, ամրացնում են նրանց հաւատը պատարագով և հաղորդութեամբ, դէպի մարտն են առաջնորդում ցնծութեամբ, իսկ կռւից յետոյ մխիթարում են վիրաւորներին, իրանց հառաչող հոգով և Աւետարանի ընթերցանութեամբ դէպի երկինքն են յուղարկաւորում իրանց քաջաբար ընկած հոգևոր որդոց հոգիները։

Այդ հոգևորներն իրանց կոչման կատարումով անխզելի կապով կապած են պահում իրանց եկեղեցու և հաւատի հետ իրանց կենդանի ու մեռնող որդոց հոգիները։

Ապահով վայրերում, փափուկ ու տաքուկ բնակարաններում քնքշացող անձերի համար թերևս ծիծաղելի իսկ երեւայ (ի հարկէ միայն հայ անձերի համար), թէ հայ զինւորը, հայ օֆիցերը պատերազմի դաշտում գնդակների տարափի տակ կը կարօտի հոգևոր մխիթարութեան, բարոյական քաջալերութեան։

Այդպիսի ծիծաղով ծիծաղողներին մարդու հոգեկան աշխարհի ծանօթութեան մէջ անգէտ ենք համարում։ «Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի» ասված է Ս. Գրքում. սա դատարկ խօսք չէ. նեղութեան մէջ ընկած անհաւատն իսկ հաւատաւոր է դառնում և մի վերին օգնութեան միշտ կարօտ։ Այդ կարօտը յագեցնող եկեղեցականը նեղած անձի հոգին է փրկում յուսահատութիւնից, ոգի է ներշնչում, հաւատն է բարձրացնում դէպի արդար գործը։ Իսկ յոյսը, ոգևորութիւնը, հաւատը թերևս ոչ ոքի այնչափ կարևոր չը լինեն, որչափ զինւորին պատերազմի դաշտում։ Առանց դրանց քաջութեան անունն ժառանգել իր առաջնորդների և մարդկութեան առաջ ոչ մի զինւոր չի կարող։

Թէ հայ զինւորութիւնը կարօտ է հոգևոր մխիթարութեան, երևում է մանաւանդ նրանից, որ հայ օֆիցերներից միջնորդաբար դիմողներ են եղել հոգևոր իշխանութեան, թէ հայազգի զինւորութիւնը կարօտ է հոգևոր մխիթարութեան, բարոյական քաջալերութեան, մանաւանդ մեծ պասի և զատկական օրերին։ Ի հարկէ հոգևոր իշխանութիւնը իր կարգադրութիւնը կանէ, բայց անցաւ մեծ պասը և խորհուրդներով լի օրերում հայ զինւորութիւնը դարձեալ կարօտ մնաց իր եկեղեցականներին։

Բարեկեցութեան, ազգեցութեան մէջ փայփայված վարդապետներն ու քահանաները պէտք է գնան, պէտք է առաքվեն բանակները. հայ հոգևորականը հոգևոր մխիթարութիւնը տալով հայ զինւորին՝ ինքն էլ հաւատի օրինակ կը տեսնի, հաւատի դաս կառնի հայ զինւորից։

Ի՞նչ արժէք կունենայ հայոց եկեղեցին, հաւատը, եկեղեցականը 82,000 հայ զինւորի աչքում, երբ նա հայ եկեղեցականին չը տեսնի իր աչքի պատերազմի նեղութեան մէջ օգնելիս, ներշնչելիս, մխիթարելիս։

Ո՞չ մի. այդ նշանակում է, թէ 82,000 հայ փախցնել եկեղեցու ցուրտ ծոցից, կտրել նրա սիրտը հայոց եկեղեցուց։

Գէթ այս մեծ չարիքից ազատ մնալու համար հայոց հոգևոր վարչութիւնը իր փայփայած, գուրգուրած վարդապետներին, քահանաներին, եպիսկոպոսներին պէտք է առաքելութեամբ հայ զինւորութեան մօտը ղրկէ, ռուսաց բանակները։ Գործի ժամը ոչ թէ հասել է, այլ անցնում էլ է։ Հայ եկեղեցին ու հոգևորները թող ցոյց տան, թէ հնացած չէ իրանց կոչումը, անպէտք չեն իրանք։

Ց.

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՍԵՂԱՆԸ

Կայծակի սպառնալիքը ամենից առաջ երկնասլաց լեռների և բարձրակատար ծառերի գլխին է կախված. ծաղիկներից էն ամենից քնքոյշը աւելի դիւրութեամբ է թառամում կոպիտ ձեռքերում. պտուղներից ամենանուրբն ու անուշահամն աւելի շուտ է փտում խոնավաշուրկ վայրերում։

Այդպէս են և հանճարեղ մտքերից, վսեմ հոգիներից ճառագայթած փրկարար գաղափարները, որոնք լեռների չափ բարձր են, ծաղիկների պէս՝ քնքոյշ։

Քրիստոնէութեան բերած գաղափարներից էլ աւելի բարձրն ու վսեմը մենք չը գիտենք. բայց նրանց աղաւաղումներիցն էլ աւելի սոսկալին չը գիտենք, աղաւաղումներ, որոնք կատարվել են ու կատարվում են նոյն ինքն քրիստոնեաների ձեռքով և յանուն Քրիստոսի։ Ուրիշի՞ ծառը…

Քրիստոնէութեան առաջին դարերում քրիստոնեաներն այնպիսի բարբարոս հալածանք հանեցին հեթանոսների դէմ, որի առաջ հեթանոսականը դալկանում էր. կաթոլիկ եկեղեցու հաւատաքննութիւնն իր խարոյկներով, մթան մէջ մեկնվող թունաւոր ձեռքերը, մերկ դաշոյնը, որ դարերով գործ դրվեցին քրիստոնէութիւնը պաշտպանելու անունով, սոսկումով են լցնում մարդու հոգին. և այդ անում էին այն կրօնի հետևողները, որ քարոզում է թէ՝ օրհնեցէք ձեզ անիծողներին, բարիք արէք ձեզ ատողներին…

Մի ուրիշ կողմից քրիստոնէութիւնը մարդկութեան տառապեալ, տանջված, ընչազուրկ, աղքատ դասի կրօնքն է։ Այդ կրօնքը պաշտպանելու, խնամելու էր եկել խեղճերին, որ հալածված ու արհամարհված էին հզօր ու աշխարհիկ տիրողների ձեռքով։

Բայց նրա աղաւաղումների հետևանքով խեղճերն էլի արհամարհված մնացին և հալածական դարձան. կոպիտ ույժը բարոյականութեան համար միակ աղբիւրը մնաց. ով ուժով է, նա է բարոյականը, նրան պէտք է երկրպագել։

Ի պատիւ հայոց եկեղեցու ասենք, որ նրա պատմութեան մէջ կան էջեր, որոնք վկայում են, թէ նա քրիստոնեայ է եղել։

Մեր հայրապետներից ոմանք հասարակ ժողովրդի պահպանութեան ու բարօրութեան համար պէս-պէս աստուածահաճոյ հաստատութիւններ հիմնեցին. նրանցից ոմանք Քրիստոսի օրինակով շրջում էին գիւղերը, քարոզում, մխիթարում, սեղան նստում աղքատների ու խեղճերի հետ։ Մեր թագաւորներից մէկն իսկ՝ Աշոտ Ողորմածը աղքատներին հաւաքելը և նրանց հետ սեղան նստելը իր քրիստոնէական պարտքն էր համարում։

Բայց այդպէս չը մնաց այդ եկեղեցին. մենք ապրում ենք աղաւաղումների օրերում. ուրիշների քրտինքի վաստակից բաժին խնդրել և հեռուից մատնացրել աղքատներին առանց նրանց երեսը տեսնելու և այն էլ առ ամօթոյ, ահա միակ մնացորդը մեր քրիստոնէութիւնից։

Էլ նշանակութիւն չէ տրվում մխիթարութեան, յուսադրութեան, հոգեկան հաղորդակցութեան, որոնք մի պատառ հացից շատ աւելի զօրեղ կապ են քրիստոնեայ եղբայրութեան համար։

Մեր օրերում հայ ժողովրդից էլ աւելի մխիթարութեան, մի քաղցր խօսքի, մի տաք շնչի կարօտ ժողովուրդ չը կայ. նրա հարիւր հազար հոգին իր ետևը թողնելով բրիշակ տունը, աշխատած ապրուստը, սիրելիների անթաղ դիակները, արեան հեղեղ փռելով ձմրան ձիւնի վրա՝ դէպի այս կողմերն եկան։ Նրանց մի մասը Թիֆլիս ապաւինեց։

Մեր խաչված ազգակիցները՝ գաղթականները փոքր ի շատէ ընդունելութիւն գտնելով այստեղ իրանց ազգակիցներից փափկասիրտների կողմից, տանջանքի խաչից կենդանի իջած զգացին իրանց։

Բայց լինում են խորհրդաւոր րոպէներ, երբ Խաչեալի կրած հոգեկան ցաւերն իբրև այրող յիշողութիւն նորից վերադառնում են։

Յիսուսի յարութեան, հայոց Զատկի տօնը, որ ամեն տարի հոգեկան մեծ բաւականութեամբ, կրօնական երկիւղածութեամբ կատարել է հայ գաղթականը իր եկեղեցում, իր չէն տան մէջ, այս տարի դառնութեամբ լցնում է նրա հոգին։

Այս տարի նա իսպառ զրկված է զգում իրան զատկական օրերի մեծ վայելքից. չէ որ գաղթականը Զատիկ չունի, սեղան չունի…

Սպասում էինք թէ հայոց եկեղեցին, հայ բարեկեցիկ ժողովուրդը գաղթականի համար սեղան կը բանար, նախնի քրիստոնեայ եկեղեցու և հայի նման խորհրդաւոր օրերի ուրախութեամբ կը մխիթարէր գաղթականի բեկված սիրտը և այդ մի քանի ժամվայ սրտամերձութեամբ բազդաւորների և գաղթականի հոգեկան կապը կամրանար և Քրիստոսը կուրախանար իր «փոքրիկների» փոխարէն։

Բայց՝ փառք Աստուծոյ, քրիստոնէութիւնը դեռ գոյութիւն ունի հատ-հատ հայ սրտերում. գաղթականի առաջ ճրագալոյցի երեկոյեան սեղանը իր համեստ յարկի տակ բաց է անում իր ազգաշահ գործի հետեւանքով ընչազուրկ եղած պ. Տիգրան Նազարեանը, ծէսից, արարողութիւնից, ձևից դուրս՝ բայց այս իսկական քրիստոնեան։

Քրիստոսը պաշտվել չէ կարող արժանապէս ոչ Գարեզիմ սարի վրա, ոչ Երուսաղէմի տաճարում, այլ միա՛յն կենդանի մարդկանց սրտում. չէ որ Յիսուսը ճշմարիտ Աստուծոյ աթոռը մարդու հոգու մէջ հաստատեց։

Նազարեանի անմլէքը յաւէրժ բան է. Քրիստոսն է խօսել նրա սրտում իր «եղբայրներից», անտուն-անտէր գաղթականի համար։

Գաղթականի զատկական սեղանը իրքէլիւա, քրիստոնեայ Նազարեանի անձնուէր երկարամեայ գործունէութեան շուք ու փայլ է տալիս։ Այդ սեղանի գաղափարը մի պայծառ նկարագիր է Նազարեանի պատուական սրտին։

Գաղթականի սեղանը աղքատ Նազարեանի տանը… Բայց ինչ կասեն եկեղեցին ու մեծատունները…

Բենիկ վարդապետ

ՔԱՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

(Սեփական թղթակցից)

Կարս, 11 մարտի

Ամսիս 10-ին հասայ Կարս, ուր դեռ գարուն չի եկել, թէև ձմրան նման սառնամանիք ու բուք չը կայ։ Դեռ ձիւնը ծածկած է դաշտերն ու սարերը, թէև տեղ-տեղ երկիրը ազատվել է սպիտակ սաւանից։ Անձրև է գալիս մեղմ և ընդհատ, ցեխը հասնում է մինչև ծնկները, ջրերը կանգնած են փողոցների երկու կողմերը մայթերի տակ։ Շարամբի «Արծաթ-Գեօլը» լցվել է, «Տարբօղազի» ջուրը անվերջ գալիս-թափվում է այդ լճակը և աւելացածը թափվում Ռահ գետը (Կարս-չայ)։

Ինքը գետն էլ սովորական մակարդակից երկու արշին բարձրացել է։ Թէև Կարս գետի ակունքի՝ Սարըկամըշի լեռների և Սօղանլուղ անտառի ձիւնը դեռ չի հալված, բայց արդէն շրջակայ ձորերից և դաշտերից վազած ջրերը փրփրալի ողողում են Կարսի ձորի ափերն ու առաջ են շարժվում։

Ցաւն արդէն սկսվել է։ Բնիկների, հարուստների, մեր գիւղացիութեան կամ բանակի մէջ ինչ չափի է հասած, գաղափար չունեմ, քանի որ այդ մասին ոչ մի տեղեկութիւն չը կարողացայ հաւաքել. բայց փախստական հայերի մէջ արդէն գոյութիւն ունի և նրանց մասին այսօր մի քանի տեղեկութիւններ հաւաքեցի։

Մարտի 10-ին մի ալաշկերտցի 8 տարեկան հայ տղայ, բծաւոր տիֆով մեռած, թաղել է տեղիս հայ-կաթոլիկ քահանան։ Նա պատմում էր, որ տիֆով բռնված մի ընտանիքում չորս հիւանդների հետ ապրում են առողջներ և քնում միևնոյն սենեակում. հնար չունեն իրարից առանձնանալու։ Բծաւոր տիֆով մեռած հիւանդի տանը, անդամները և անկողին ու կարասիներ չեն ախտահանված։ Աղիքային և բծաւոր տիֆով բռնված ընտանիքի անդամներին չեն չէզոքացնում և խառն են ապրում թէ հիւանդների և թէ առողջների հետ։

Ես հայ կաթոլիկ քահանային չէի կարող չը հաւատալ, մանաւանդ որ նա առաւօտ վաղ սրբութիւն էր տարել, տուել տիֆով հիւանդացածին և մերժել էր խոստովանեցնել մի տիֆով հիւանդի, որը պառկած է եղել երեք ուրիշ տիֆով հիւանդացածների հետ միևնոյն սենեակում կողք կողքի, և ուրիշ տեղ չեն ունեցել՝ առանձնացնելու խոստովանել ցանկացողին։ Իսկ գիշերը ընտանիքի առողջ անդամներն էլ գիշերում են եղել միևնոյն սենեակում, որի ծաւալը 7 խորանարդ սաժէնից էլ մի բան պակաս է։

Ես դիմեցի փախստականների համար յատկացված բժշկին և բացատրութիւն խնդրեցի։ Նա յայտնեց, որ մինչև օրս, մարտի 11-ին, դեռ բծաւոր և աղիքային տիֆով հիւանդացողների համար յատուկ բարակներ չեն շինված։ Միայն այսօր հիմնել են և սկսել են ընդունել հիւանդներ։ Ինքը մի երկուսին արդէն զետեղել է և միւսների մասին հոգում է։

Երբ ես շտապեցի, թէ այդ հիւանդները կարող են վարակել ոչ միայն ամբողջ ընտանիքը, այլ և նրանց բարեկամներին, ազգականներին, ընկերակից փախստականներին և սրանց հետ Բայրամ-փաշա թաղի բնիկներին, բժիշկը պատասխանեց.

— Ի՞նչ անեմ. կառք չունեմ, ձի չունեմ, իսկ ցեխ օրերին անհնար է ոտքով գնալ այդ թաղերը։ Մարդ եմ ուղարկում ոստիկանապետին, որը ոստիկանի հետ կառք է ուղարկում։ Երբ կառք նստած գնում եմ Բայրամ-փաշա թաղի կողմը, կառապանը կանգնեցնում է կառքը և չէ գնում, առարկելով թէ չէ ցանկանում իր կառքը կոտրել և ձիերին սպանել, քանի որ ճանապարհը շատ վատ է։

Դիմել է տեղիս կոմիտէին, որ հնար գտնեն բժշկին, ֆէլդշէրին և ֆէլդշէրուհուն հիւանդներին այցելելու կամ հիւանդներին տեղափոխելու, իսկ կոմիտէն փոխանակ միջոցներ ձեռք առնելու՝ առաջարկել է ձի գնել և պահել կոմիտէի միջոցներով։ Բայց թէ բժիշկը ինչպէս ձի գնէ և ինչպէս պահէ, կամ ինչ գումարով, հոգս քաշող չը կայ։

Երբ ես բժշկին դիմեցի, թէ ինչու չեն դիմում Թիֆլիս՝ գլխաւոր կոմիտէին, նա վշտացած պատասխանեց.

— Նրանց էլ դիմել եմ, դիմումներ եմ պահանջել, առաջարկներ եմ արել, բայց բացի անտարբերութիւնից ոչ մի խրախոյս չեմ ստացել։

Այս քար անտարբերութիւնը տեղական և կենտրոնական կոմիտէի կողմից ի՞նչպէս պէտք է բացատրել, չը գիտեմ։ Ես կարծում եմ, թէ պէտք է մամուլին յանձնել և թողնել, որ հասարակութիւնը իր դատաստանը կատարէ։

Բայց միթէ այդ կոմիտէների անդամները չեն մտածում, որ եթէ համաճարակը սաստկանայ, թէ բծաւոր և թէ աղիքային տիֆերը կարող են և իրանց բնակարանները մտնել, որքան էլ որ նրանք պինդ փակած և ախտահանած լինեն։ Միթէ մոռացան բժիշկ Շահազիզին, Գէլովանիին և համանմաններին, որոնք բոլորն էլ զոհ են այդ քար անտարբերութեան։

Վերջին փետրվար և մարտ ամսի մէջ հետևեալ հիւանդութեան դէպքերն են հանդիպել միայն տեղիս փախստական հայերի մէջ, որոնք խնամվել են նրանց համար յատկացված բժշկի միջոցով։

Բծաւոր տիֆով հիւանդացել են մարտի 1—7-ը ընդամենը 12 հոգի, որոնցից մեռել են 3-ը, առողջացել են 2-ը։

Աղիքային տիֆով հիւանդացել են մարտի 1—11-ը ընդամենը 16 մարդ, որոնցից մեռել են 4 հոգի։

Փօրհարինքով հիւանդացել են փետրվարի ընթացքում 11 հոգի, 6-ը լաւացել են և 4-ը մեռել։

Սկարլատինով հիւանդացել են փետրվարի ընթացքում 14 հոգի, 5 լաւացել են, իսկ 6 մեռել։

Գիւղերի վիճակի մասին տեղեկութիւն չը կայ։

Ատրպետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» հետևեալ համարը, տօների պատճառով, լոյս կը տեսնէ Զատկի օրը, մարտի 22-ին։

◆ Թիֆլիսի նահանգի նահանգական ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար Սումբաթով Թագաւոր Կայսրից, ի պատասխան Պերեմիշլի գրաւման առիթով ուղարկած ամենահպատակ հեռագրի, ստացել է հետևեալ հեռագիրը.

Սրտանց շնորհակալ եմ ազնուականութեան նահանգական ժողովից՝ հաւատարիմ հպատակութեան զգացմունքների արտայայտութեան համար։ Բաւականութեամբ յիշում եմ նրանց մէջ անց կացրած ժամանակը։

ՆԻԿՕԼԱՅ

◆ Կիրակի, մարտի 15-ին, կոմսուհի Ե. Ա. Վօրօնցօվա-Դաշկօվային ներկայացաւ փախստական-ասորիների մի պատգամաւորութիւն, որի կազմի մէջ էին դր. Ջեսի Իօնան, պաստոր Իշու և սեղանաւոր Պաուլ Շիմօն։ Կոմսուհին պատգամաւորութեանը ընդունեց չափազանց սիրալիր և մանրամասն հարց ու փորձ արաւ փախստականների դրութեան մասին։ Պատգամաւորութիւնը կոմսուհուց խնդրեց անմիջական օգնութիւն 20,000 ռուբլով՝ փրկելու համար այն ասորիներին, որոնք փակված են Ուրմիայի ամերիկական և ֆրանսիական միսսիաներում։ Վերջում պատգամաւորութեան խնդիրը ներկայացվեց փոխարքային, որը իր սրտին մօտ ընդունելով այդ խնդիրը՝ յանձնարարեց սենատոր Ջերիշին և պետ. ազնուականութեան բանկի Կովկասի ճիւղի կառավարիչ Ա. Ա. Պավլովին խօսել գլխաւոր շտաբի պետի հետ Ուրմիայի ասորիներին անմիջական օգնութիւն ցոյց տալու մասին, խնդրել նաև Թաւրիզի ամերիկական, անգլիական և ֆրանսիական հիւպատոսարաններին, որ նրանք նոյնպէս քայլեր անէին անբաղդ ժողովրդին օգնելու։ Դրա հետ միասին Ջերիշեվը յայտնել է, որ ինքը մօտ օրերս Պետրոգրադ գնալու ժամանակ իր հետ կը տանի խնդրի պատճէնը՝ արտաքին գործերի մինիստր Սազօնովին յանձնելու։

◆ Քաղ. բժշկա-սանիտարական բիւրոյի տեղեկութիւնների համաձայն, մարտի 16-ից քաղաքում բծաւոր տիֆով և այլ վարակիչ ախտով հիւանդանալու դէպքեր չեն եղել։

◆ Պատերազմական կանոնների հիման վրա մինչև պատերազմի վերջը իշխանութեան կողմից դադարեցված են տեղական «Зак. Рѣчь», «Голосъ Кавказа» և Բագուի «Արև» թերթերը։

◆ Պետրոգրադ մեկնեց համալսարական

քաղաքների դաշնակցութեան լիազոր և Բաթումի կոմիտէտի նախագահ կոմս Գ. Ս. Շերեմետևվ։

◆ Քաղ. գործադիր յանձնաժողովը, Պեսկովսկայա թաղամասը առողջապահիկ դրութեան մէջ դնելու նպատակով, որոշել է Փետրվարի 19-ի փողոցի վրայի բոլոր ախոռատները փակել։ Կառապանների ընկերութիւնը միջնորդութիւն է յարուցել այդ որոշումները փոխելու մասին։

◆ Փոխադրական քննութիւնները Մանթաշեանի առևտրական դպրոցում կը սկսվեն մարտի 30-ին և կը վերջանան ապ. 18-ին։

◆ Տիկ. Վարվարա Իվանովնա Տիւլպանովայի մօտ, որ ապրում է Փետրվ. 19-ի փողոցի № 12 տանը, գտնվում է սալմաստցի մի 12 տարեկան փոքրիկ տղայ, Դաւթեանց ազգանունով։ Տիկինը այդ երեխային գտել է Աղստաֆա կայարանում և իր հետ բերել Թիֆլիս։ Այժմ տիկինը խնդրում է նրանց, ովքեր գիտեն որդեկորոյս ծնողների տեղը, թող այդ մասին յայտնեն նրանց։

◆ Բժ. Ալ. Աթաբէկեան, որ երկու շաբաթից ի վեր հիւանդ էր բծաւոր տիֆով և բուժվում էր Արամեան հիւանդանոցում, այժմ ապաքինվում է և վտանգը բոլորովին անցած է։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Ժամանակաւորապէս դադարեցված «Մախլաս» երգիծաբանական պատկերազարդ շաբաթաթերթը լոյս կը տեսնի Զատկի օրը, մարտի 22-ին, աւելի պատկերազարդ, քան առաջին լոյս տեսած համարները»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

Ժողովածու Դիպլոմատիկան Դոկումենտների։ Ռէֆորմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ց10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

IX

102-րդ դոկումենտը դեսպան Գիրսի հեռագիրն է արտաքին գործերի մինիստր Սազօնովին, 1913 թ. նոյեմբեր 3-ին, թէ մեծ վեզիրը համաձայնել է մի քանի ուղղումներ մտցնել խորհրդականների մասին ծրագրի մէջ։

103-դ դոկումենտը այն հեռագիրն է, նոյեմբերի 3-ին, որով Բեռլինի ռուսաց դեսպան Սվերբէեվը յայտնում է Սազօնովին, թէ անհնարին բան է, որ Գերմանիան մեզ հետ միասին հանդէս գայ Կ. Պօլսում, հայկական ռէֆորմների՝ մաքսային յաւելման հետ ունեցած կապի առիթով, որովհետև երբ թէ երբ Ցիմմերմանը Ջաւիդին խիստ կերպով յիշեցրեց այդ կապի մասին, նա պատասխանել է, թէ Գերմանիան արդէն տուել է իր համաձայնութիւնը յաւելման համար, ուստի և Բեռլինի կաբինէտը նոր պայմաններ այլևս դնել չէ կարող։

104-րդը Սազօնովի հեռագիրն է Գիրսին, 5 նոյեմբերի, թէ Բ. Դռան արված են արդէն ամենավերջին զիջումները մեր ծրագիրը ընդունել տալու համար, ուստի նոր զիջումներ անելը դժուար է և պէտք է պնդել առաջարկի վրա։

105-րդը նոյն Սազօնովի հեռագիրն է դեսպան Գիրսին, 9 նոյեմբերի, հետևեալ բովանդակութեամբ.

«Ես Թուրխան փաշայի միջոցով ստացայ հետևեալ յայտարարութիւնը. «Օսմանեան կայսրութիւնը մտահոգված Փոքր Ասիայում ռէֆորմներ մտցնելու հարցով՝ դիմեց տարբեր պետութիւններին խնդրելով որոշ թւով փորձված մարդիկ դնել իր կարգադրութեան ներքոյ, բայց հանդիպեց մերժումների, պատճառաբանված այն անհրաժեշտութեամբ, թէ պետութիւնները պէտք է բանակցեն իրար հետ վերանորոգումների հիմքերի մասին։ Բ. Դուռը մատնանշում է, որ այն վարչապետները, որ չեն նշանակվի իր կողմից, այլ իր վզին կը փաթաթվեն պետութիւններից, ոչ մի ժամանակ հարկաւոր հեղինակութիւնը չեն կարող ձեռք բերել, և այդ պատճառով խնդրում է չը խանգարել իրան հրաւիրելու հարկաւոր մարդիկ երկրորդական պետութիւններից»։

«Ես պատասխանեցի դեսպանին, որ մեր պնդումները հայկական վիլայէթների բարենորոգումների որոշ ծրագրի նկատմամբ հիմնված են հէնց հակառակ համոզման վրա, այն է՝ բացառապէս Բ. Դրան կողմից նշանակված իշխանաւորները չեն կարող ձեռք բերել հասարակութեան վստահութիւնը։ Դրա հետ միաժամանակ ես նորից կրկնեցի, որ մենք ի նկատի չունենք ոչ հողային ընդարձակումը, ոչ սուլթանի պրեստիժի նուազեցումը, որ մենք ապացուցել ենք մեր զիջողութիւնը ամեն բանում, որ կարող էր վիրաւորել Թիւրքիայի ինքնասիրութիւնը, և որ մենք արդէն հասել ենք մեր զիջողութիւնների սահմաններին և չենք կարող նոր զիջողութիւններ անել։ Ես դեսպանի ուշադրութիւնը հրաւիրեցի հայերի խեղճութեան և այն բանի վրա, որ մենք չենք կարող հրաժարվել նրանից, որ մենք համարում ենք որպէս մինիմալ ապահովութիւն։

«Բարեհաճեցէք մեծ վէզիրի հետ ունեցած ձեր բացատրութիւններում կրկնել իմ՝ դեսպանին ասածները, յաւելացնելով որ մեր պնդումների ընդունելու դանդաղեցումով, պնդումներ, որոնք առաջ են գալիս դէպի Թիւրքիան ունեցած բարեացակամ վերաբերմունքից, Բ. Դուռը պատրաստում է մի այնպիսի դրութիւն, որը սպառնում է լուրջ բարդութիւններով։ Եթէ հայերը կորցնեն հաւատը դէպի իրանց դրութեան բարւոքումը, նրանք կարող են ծայրայեղութեան դիմել, իսկ մենք բազմիցս նախազգուշացրել ենք, որ նման դրութեան հանդէպ մենք չենք կարող անտարբեր մնալ»։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԻՑ ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆ ԱՀՄԷԴ ՄԻՐԶԱՅԻ ՄՈՒՏՔԸ ԹԱՒՐԻԶ

Թաւրիզ, 6 մարտի

Այս տարվայ սկիզբներում մայրաքաղաքից զեկուցվել էր, որ գահաժառանգ իշխանը ըստ առաջնոյն մնալու է Թաւրիզում իբրև ընդհանուր Ատրպատականի տէրն ու հրամայողը։ Ռուսաց զէնքի զօրութեամբ թիւրքաց չէտաները չարաչար պարտութեամբ խոյս տալուց յետոյ, յարմար ժամանակ համարվեց արդէն գահաժառանգի Թաւրիզ գալը։

Թաւրիզի ոստիկանապետը գրաւոր յայտարարութեամբ յայտնեց ընդհանուր հասարակութեան, որ նորին կայսերական բարձրութիւն վալիէթը Նովրուզ-Բայրամից 2—3 օր առաջ մտնելու է քաղաք. այդ պատճառով պատուիրում էր ընդհանուր հասարակութեան 3 օր և 3 գիշեր հանդէսներ անել. հրավառութիւն, լուսաւորութիւն ու խրախճանք կատարել՝ զարդարելով հաստատութիւնները, բազարները և տները՝ ով ինչ չափ կարող է։ Փետր. 25-ին որոտացին թնդանոթի աւետաբեր հարուածները. այդ օրը գահաժառանգը ոտք կոխեց Ատրպատականի հողը՝ Մէեանէ։ Մարտի առաջին օրերից ժողովուրդն սկսեց զարդարել բազարներն ու տները գորգերով, գոյնզգոյն կտորներով և շողշողուն ջահերով. մի խօսքով՝ քաղաքը ստացաւ թունդ տօնական կերպարանք։

Ի պատիւ Թագաժառանգ իշխանի՝ զանազան հաստատութիւնների, անձերի և ազգութիւնների կողմից Խիավանի ընդարձակ փողոցի վրա, որտեղից անցնելու էր իշխանի թափօրը, յարմար համարված կէտերում, կառուցվեցին մէկը միւսին գերազանցող յաղթական կամարներ. կամարներ էին շինել քաղ. վարչութիւնը (բէլէդիէ), ելևմտական վարչութիւնը (մալիէ), թուրք վաճառականների միութիւնը, Ատրպատականի հայոց առաջնորդարանը, ոստիկանապետը և նահանգական կառավարութիւնը՝ Խալաթ Փուշանում, որտեղում պէտք է լինէր դիմաւորող դիւանագիտական մարմնի և այլ պաշտօնական անձնաւորութեանց ընդունելութիւնը իշխանի կողմից։

Երէկ, մարտի 5-ին, շուկաներում մունետիկը բարձրաձայն յայտարարեց հասարակութեան, որ «վաղը կէս օրից յետոյ, ժ. 3-ին վալիէթը մտնելու է Թաւրիզ, շտապեցէք դիմաւորել և զարդարել տներն ու փողոցները»։ Արդարև այսօր վաղ առաւօտից մարդկային հսկայ հեղեղը իր քայլերն ուղղել է դէպի Խիավան. այնտեղ են թուրք ուսումնարանների համազգեստաւոր աշակերտները իրանց ուսուցիչներով և երգում են օրվայ տօնին նուիրված երգեր. ուրախ է և երգելով անցնում է դէրվիշների խումբը. կառքերով վեր ու վար են անում Խիավանով մթրպներ՝ նուագարաններ ածելով ու երգելով. երկու սեռից կազմված ամբոխը ծովի ալիքի նման ծածանվում է Խիավանի երկարութեամբ։ Ժամը 12-ին ռուսաց հետևակ զօրքը, կօզակները թնդանօթներով, իրանց գլուխն ունենալով զօրահրամանատար գեներալ Չերնօզուբովին, ընդառաջեցին մինչև Խիավանի վերջին ծայրը և տեղ բռնեցին. գնացին նաև պարսից ձիաւորներ և զինւորներ, որոնք գահաժառանգի գալու առիթով հաւաքվել էին ու կազմակերպվել։ Ժամը 1-ին Խալադ-Փուշան ուղևորվեցին ռուսաց հիւպատոսի փոխանորդը, անգլիացոց, ամերիկացոց, Ֆրանսիացոց հիւպատոսներն իրանց թարգմաններով և Ատրպատականի առաջնորդական փոխանորդ Կարապետ Ք. Մանուկեան, ուր կատարվեց շատ կարճ ու պատշաճ ընդունելութիւն իշխանի կողմից։ Առաջ ընդունվեց դիւանագիտական մարմինը. յետոյ գահաժառանգը բարեհաճել էր հրաւիրել հայոց առաջնորդական փոխանորդին. իշխանի մօտ թարգմանի պաշտօն և ներկայացնողի պարտականութիւն էր կատարում Սարդար Րաշիդ։ Հայր փոխանորդի համառօտ, բայց շնորհալի շնորհաւորութիւնն ու մաղթանքը նորին բարձրութեան բարի գալստեան համար իր և հայ ժողովրդի կողմից՝ թողեցին հաճելի տպաւորութիւն, որին ի պատասխան իշխանը յայտնեց խիստ գոհունակութիւն հայերից և խոստացաւ դէպի հայերը լինել միշտ բարեացակամ, ինչպէս իրա նախնիքն են եղել։ Փոխանորդից յետոյ կարգով ընդունվեցին այլ պաշտօնական անձնաւորութիւններ։

Ժամը 3-ին գահաժառանգի պրոցեսիան շարժվեց դէպի քաղաք թնդանոթի 101 հարուածներով, ռուսաց և պարսից զինւորական նուագածութեամբ և ժողովրդի անվերջ ու գոռգոռուն օվացիաներով։

Յաղթական կամարների տակով անցնելիս գահաժառանգը փոքր ինչ կանգ էր առնում և նշանացի գոհութիւն արտայայտում։ Արդէն նախօրօք առաջնորդարանի տպած յայտարարութեան համաձայն՝ հայ հասարակութիւնը տեղ էր գրաւել իր պատրաստած կամարի մօտ, իրան գլուխ ունենալով փոխանորդին և միւս երկու քահանաներին. գահաժառանգը հասնելիս Սարդար Րաշիդ յայտնեց, թէ հայերի պատրաստածն է. իշխանը փոքր ինչ կանգ առաւ, դիտեց և գոհութիւն յայտնեց. այդ իսկ ժամանակ հայերի կողմից պատրաստ ոչխարը զենվեց իշխանի նստած ձիու առաջ. միւս կողմից թաղապետութեան կողմից ոտքերի տակ նետեցին քասա նաբաթ, որպէս նշան բարի սիրոյ և հպատակութեան. բազմահազար ամբոխի ուրախ աղաղակներով իշխանի թափօրը շարժվեց առաջ։

Այժմ տեղին է ասել, որ Ատրպատականի առաջնորդական փոխանորդի և վարչութեան մասնաւոր ջանքերով հանդէս բերված ճաշակաւոր կամարը միահամայն պատւաւոր հանգամանք ունեցաւ հայ-թուրքական յարաբերութեան տեսակէտից ևս, որոնք բուռն համակրանք էին արտայայտում հայոց վերաբերութեամբ։ Հայոց վրանի մօտ խփված էր նաև մի վրան, մէջը կահաւորված, ուր թէյով և քաղցրաւենիքով մեծարվում էին պատահական հիւրերը։

Գահաժառանգը քաղաք մտաւ ոչ աւելի քան 2500 զօրքով և 2 հատ նոր սիստեմի թնդանոթով։ Զօրքերից 200 հոգի Թէհրանի ժանդարմներ էին, մնացածները Ղարադաղի ձիաւորներ և Թաւրիզից ընդառաջող հետևակ զինւորներ։

Գահաժառանգը, ըստ վաղեմի սովորութեան, իր մօտն ունի իբրև փիշքար ծերունի և փորձառու Նիզամի-ուլ-Մուլքին, որ կը վարէ նաև ընդհանուր նահանգապետի պարտականութիւնը։ Հաւանական է՝ Սարդար Րաշիդին պահեն րէիսը-դօշուն (զօրահրամանատար) պաշտօնում, որին Թէհրանից բերել են նոր տեղաս՝ Ամիր Նուեանն Իշխանի հետ եկել են նաև քարգուզար Շէրիֆ Դովլէն, րէիս կաբինէտ (իշխանի քարտուղարը) և մի ընդունելութեան պաշտօնեայ (րէիս թէշրիֆաթ)։

Պարսիկ ժողովրդի ոգևորութիւնը բուռն է և տրամադրութիւնը բարձր։ Վալիէթի գալը և Նովրուզի տօնը միմեանց խառնված՝ նմանը չը տեսնված հանդիսաւոր և զուարթ օրեր են տուել պարսիկ ժողովրդին, որ մինչև այսօր և դեռ մի քանի օր, տիւ և գիշեր քէֆերով ու նուագածութիւններով է զբաղվելու։

Գահաժառանգի համար բնակարան պատրաստված է մեծ խնամքով Ալա Կապուի ընդարձակ շինութեան մէջ։

Հայկազուն

Ց. Գ.—Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թաւրիզից առանց անցագրի կամ ռուսաց հիւպատոսարանի թղթով գնացողների վերադարձը կախված է ծանր տուգանքից, այն է պարսից Ջուլֆայում առնում են ամենանուազագոյն արժէքը 15 ր. ոչ պակաս. հայր փոխանորդը դիմեց մի գրութեամբ պ. Մոնիտօրին, որ վերադարձողներից անցագրի գին չառնվի։ Պր. Մոնիտօր, կենտրոնից թոյլտւութիւն ստանալուց յետոյ, յայտնեց պաշտօնապէս, որ այդ տուրքը հայերի համար ներված է այժմ։

«Մշակի» միջոցով յայտնելով հանդերձ շնորհակալութիւն պ. Մոնիտօրին և կենտ. իշխանութեան, խորհուրդ ենք տալիս Թաւրիզցիներին շտապել դէպի իրանց հայրենիքը։ Նոյն

ՖԵԼԻԵՏՕՆ

ՇՏՐԻԽՆԵՐ ԿԵԱՆՔԻՑ

«Тифл. Лис.» թերթի մարտի 17-ի համարում (№ 62) տպված է մի լուր, թէ Կ. Հ. Բ. Ընկ. նախագահ պ. Ս. Յարութիւնեանը ստացել է հեռագիր Պետրոգրադից պ. Ալ. Ասրիբէգեանից այն մասին, թէ մինիստրների խորհուրդը հնարաւոր է գտել չը գործադրել յունվարի 11-ին հրատարակված օրէնքը թիւրքահպատակ քրիստոնեաների վերաբերմամբ։

Ինչպէս յայտնի է, մինիստրների խորհրդի այդ որոշումը կայացել է փետրվարի 17-ին և հրատարակվել ռուսաց թերթերում մի քանի օրից յետոյ, ի թիւս որոց և «Рус. Слово» թերթում մանրամասնօրէն։ «Մշակի» մէջ ևս հրատարակվել է մարտի 13-ին (№ 54)։ Արդ, ինչ հարկ կար, կը հարցնէ ընթերցողը, տպել տալու մի այդպիսի հեռագիր, այն ևս այնքան ուշացած կերպով։

Մարդկային փառամոլութիւնը, ամպարծութիւնը չափ և սահման չունի։ Ջգտումը՝ ցոյց տալ որ «մենք ամեն բանի մէջ կանք, մենք ենք ամեն բան անօրինողը»—ստիպում է մարդկանց յաճախ ծիծաղելի քայլեր անել։ Այն ժամանակ, երբ մի կարգադրութիւն վաղուց եղել է և յայտնի դարձել, Ս. Յարութիւնեան, որպէս թէ անգիտակ այդ ամենին, դիմում է հեռագրով Ա. Ասրիբէգեանին և հարցնում նոյն խնդրի մասին, վերջինս էլ պատասխանում է եղած իրողութիւնը, և ահա Ս. Յարութիւնեան հրատարակել է տալիս այդ հեռագիրը. «Мы тоже пахали» Ուրեմն, թիւրքահայեր, խմեցէք այդ ուրախալի լուրը և շնորհակալ եղէք Ս. Յարութիւնեանից...։

Մնում է այժմ, որ Գ. Չալխուշեան իր անբաժան ընկերներով՝ Գէորգ վ., Պապով, Սալտիկեան, Զուրաբ, մի որոտընդոստ շնորհակալութեան հեռագիր ուղարկեն ամեն տեղ՝ գովաբանող Ս. Յարութիւնեանի այնքան արագընթաց գործունէութիւնը...

—

Դարձեալ Հ. Կենտր. Կոմիտէի մասին։

Այդ կոմիտէն հրատարակել է տեղեկագիր գաղթական-փախստականների մասին։ Զարմանալի ճարպիկ մարդիկ են կազմողները։ Տպել են մի նախահաշիւ, որ պահանջում է 4.765,450 ր. փախստականների մասին։ Ի՜նչ սրտացաւ կոմիտէտ է. ինչպէս հոգ է տանում փախստականների մասին, կազմում է այդպիսի մանրամասն հաշիւ։ Բայց մի տեղ առաջ կարդացել ենք այդ նախահաշիւը...։ Եւ ո՜վ զարմանք... դուրս է գալիս, որ այդ նոյն նախահաշիւն է, որ կազմվեց վերջերս Էջմիածնի համաժողովում։ Տեղեկագիր կազմողները՝ Մեսրոպ եպիսկոպոս, Ս. Յարութիւնեան և այլք՝ չեն խղճահարվել ուղղակի արտագրել այդ նախահաշիւը և այնպէս ցոյց տալ, որ իբր այդ նախահաշիւը կազմել է Հայկ. Կենտր. Կոմիտէտը. մի խօսք, մի բառ անգամ չը կայ այն մասին, որ այդ նախահաշիւը կազմվել է Էջմիածնի համագումարի ձեռքով։ Եթէ Մեսրոպ եպիսկոպոս արդարանայ նրանով, որ ինքն չէ մասնակցել այդ համագումարին, ուրեմն չը գիտէր, բայց չէ որ Ս. Յարութիւնեան և Ս. Ղազարեան մասնակցել են համագումարին և այդ նախահաշուի կազմման։

Ինչո՞ւ այդ տեղեկագրի մէջ ոչ մի խօսք չը կայ այն մասին, թէ այդ նախահաշիւը կազմվել է Էջմիածնում։ Շատ պարզ է։

Եթէ այդ յիշվէր, այն ժամանակ նուէրները կուղարկվէին Էջմիածին, որ այդպիսի հսկայական նախահաշիւ է կազմել։

Ուղղակի կերպով դուրս գալ այն կազմակերպութեան դէմ, որ ընդունված է իբրև Գլխաւոր Կենտրոնական, անյարմար է, ուրեմն զարտուղի, կողմնակի միջոցներով...

Որպիսի՜ փոքրոգութիւն։ Ծ.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱԲԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—46

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րեցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիկական տրիպպէրի և բժշկութեան մասին, րեցէպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՌՈՒՆԵՐԻ ԱՌՋԵՒՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը, Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏՈՄԱՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ ակճողի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Նիկողոսի շալվարը» ծիծաղաշարժ վօդվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն ղազաղում», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, զինւորների նկարներով, գինն է 7.։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխան տալու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէ՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(հ.կ.) 327. 100—84

Հայոց Ազգագրական Ընկերութիւն
Տիկ. Հ. Մարտիրոսեանի նուիրած գումարով
ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵՑ
ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ՀԱՅ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ
Գ. գիրքը.
Էջմիածնի գաւառի՝ Ապարանի շրջանում Ե. Լալայեանի գրի առած հէքիաթները։
«Մարգարիտների» Ա. և Բ. գրքերը նոյնպէս պարունակում են Էջմիածնի գաւառի՝ Վաղարշապատ, Օշական, Աշտարակ և Փարպի գիւղերում Ե. Լալայեանի գրի առած հէքիաթ.։
Իւրաքանչիւր գրքի գինն է 1 ռուբլի։
Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во. Тифлисъ. (հ.կ.) 144. 6—3

ԽՕՋԻՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ Թիֆլիսի հայ քահանաների ապահովութեան գանձարանի, ամեն տեսակ թիւրիմացութիւններից խուսափելու նպատակով, խնդրում է հանգուցեալների ԾԱՂԿՈՑՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ԵՒ ՋՐԵԼՈՒ ՎԱՐՁԸ 1915 թւի համար ԱՅԺՄԵԱՆԻՑ յանձնել Խօջիվանքի գերեզմանատան գրասենեակին։
Սրա հետ վարչութիւնը յայտնում է հասարակութեանը, որ գերեզմանատան գրասենեակում ծախվում են և ՄԵՏԱՂԵԱՅ ՊՍԱԿՆԵՐ։ (տ.օ.) 164. 2—2

Լոյս տեսաւ և վաճառվում է Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆԻ
„Հերցէնի կեանքի եւ գործունէութեան տեսութիւնը“
Հերցէնի պատկերով, 103 երես, գինն է 40 կոպէկ։
Կարելի է ստանալ «Մշակի» խմբագրատնից։ ◆ Լոյս տեսաւ և մօտ օրերս վաճառքի կը հանվի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ», 56 երես, գինն է 20 կոպ.։
160. 4—3

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովոդսկայա փ. տ. Աւան-Իազբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկւում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Վէնիկս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(հ.կ.) 551. 0—80

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.